

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Սեպտեմբերի 22, 2008թ.

Էկումենիկ աղոթք Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում

Սեպտեմբերի 27-ին՝ ժամը 17⁰⁰-ին, Երևանի սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում տեղի կունենա Էկումենիկ աղոթքի արարողություն՝ բարձր նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասարբություն Բարդուղիմեոս Ա-ի:

Էկումենիկ արարողությանը կմասնակցեն ավելի քան 25 ներկայացուցիչներ Արևելյան Ուղղափառ, Օրթոդոքս, Կաթոլիկ, Անգլիկան և այլ քրիստոնեական Եկեղեցիներից ու հարանվանություններից, Էկումենիկ և միջկրոնական կազմակերպություններից, ինչպես նաև պետական պաշտոնյաներ և Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ:

Սիրով հրավիրում ենք հավատացյալ հայորդիներին՝ իրենց մասնակցությունը բերելու աղոթքի արարողությանը:

###